

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ԼՈՌԱ ՓՈՐՁՆԱԿԱՆ  
ԱԽԱՍԽԱԲՈՒԺԱԿԱՆ ԶՈՒՄ ԿԱՑԱՆ

Մ. Վ. ԶԻՆԵՆԿՈ

ԱՐԵՎԱԾԱՂԻԿԸ  
ՍԻԼՈՍԻ ՀԱՄԱՐ

631  
9-63

ԳՅՈՒՂՋՐԱՑ

1935

ՅԵՐԵԿԱՆ

13 APR 2013

ՀԱԽՑ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏ — ԼՈՒՎԱ ՓՈՐՁՆԱԿԱՌ  
ԱՆԱՍՆԱԲՈՒԹԱԿԱՆ ԶՈՒԱԼ ԿԱՅԱՆ

631 Մ. Վ. ԶԻՆԵՆԿՈ  
9-63

ՀՐԵՎԱԾԱՂԻԿԸ ՄԻԼՈՒԻ  
ՀԱՄԱՐ  
1008  
36090



ԳՅՈՒՂՂԱՐԺԱ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1935

8606416

15243

Գյուղատնտեսական արտելի ստա-  
լինյան կանոնադրությունը կուսակցա-  
կան ու խորհրդային բոլոր կազմակեր-  
պություններից պահանջում ե ել ավե-  
լի ռեժիսուզնել պայքարն անասնակերի  
ամուլ բազա ստեղծելու համար, վորն  
ապահովի անասնապահության հետագա  
վերելքը, Կերի բազայի ամրապնդման  
ձեռնարկումների մեջ նշանակալից տեղ  
ե բոնում սիլոսացումը, ըստ վորում  
հատուկ ուշադրություն պետք ե դարձ.  
վի «սիլոսացման վորակի բարձրաց-  
ման և սիլոսի մննդաբար և համեղ  
հատկությունների բարելտվման վրա».

Մեր վորոշ խորհունտեսություննե-  
րում ու կոլտնտեսություններում մաս-  
ըային շրջանի կերի բարանտում դեռևս

կողտ կերը (խոտն ու հարդը) գերա-  
կշուղ տեղ ե զրագում, իսկ խտացված  
հյութալի կերը կամ բոլորովին բացա-  
կայում ե, կամ չնչին տեղ ե բռնում:

Մեր խնդիրն ե՝ յուրաքանչյուր կոլ-  
տնտեսությունում և խորհանտեսու-  
թյունում ստեղծել սննդարար ու եժան  
կեր և ձմբանն անասուններն ապա-  
հովել հյութալի կերով:

Տարեց-տարի Հայաստանի ՍԽՀ մեջ  
աճում ե սիլոսային կերի քանակը, վո-  
րը ցույց են տալիս հետելալ թվերը.

1931 թ. . . . .	26,600	տոնն
1932 թ. . . . .	28,200	"
1933 թ. . . . .	36,000	"
1934 թ. . . . .	38,000	"

Սակայն, քանակական տեսակետից,  
սա դեռ ևս անբավարար ե, իսկ սիլոսի  
վրակը դեռևս հեռու յել լավ լինելուց:  
Մյուս կողմից՝ կոլտնտեսություններն

ու, խորհանտեսությունները վարելահո-  
ղերը հատկացնելով սիլոսային կոլ-  
տուրաներին, ծախսում են միջոցներ  
և ուշ ու վատ մշակման հետեւանքով  
ստանում են շատ չնչին բերք՝ մի հեկ-  
տարից 5—6 տոնն: Սրա հետեւանքով  
ստացվում ե այն տպավորությունը,  
թե շահավետ չեն սիլոսային կուլտու-  
րաները:

Կերերի սիլոսացումը պետք ե հան-  
դիսանա ձեռնարկումների շղթայի  
ամենապլիսավոր ողակներից մեկը՝ կերի  
բազայի ստեղծման գործում: Սիլոսաց-  
ման համար անհրաժեշտ ե ընտրել և  
ոգտագործել այնպիսի սիլոսային կոլ-  
տուրաներ, վորոնք Հայաստանի ՍԽՀ  
պայմաններում կբավարելին հետե-  
յալ պահանջներին.—

1. Վորքը տարածությունից ստանալ  
առավել մեծ քանակությամբ կանաչ  
հյութալի մասսա՝ սիլոսացման համար.

2. տալ առավել ևս հարուստ, սնընդարար և հյութալի հատկություններով սիլոս.

3. գտնել մշակման ճիշտ յեղանակներ և եժան պարաբռանյութեր:

Լուփա զոնալ փորձնական կայանի տվյալների հիման վրա ՀՍԽՀ լեռնային անառնապահական շրջանների համար խորհուրդ և արված մշակել վորպես սիլոսային կուլտուրա արեվածադարիկը:

Արեածադարիկը՝ վորպես սիլոսային կուլտուրա, Խորհրդային Հայաստանի անառնապահական շրջաններում նոր կուլտուրա յեւ: Տվյալ կուլտուրան վորպես կերաբույս հաճախ թերագնահատվում է, դրա համար ել արեածադարիկն հատկացնում են ամենավատ հոգերը, այդ ցանքերի նկատմամբ համապատասխան խնամք չի տարփում և այս բոլորի հետևանքով ստացվում է ցածր բերք:

Վորպեսպի արեածադարիկը ստացվի համեմատաբար բարձր բերք, անհրաժեշտ է խմանալ, թե ինչ և ներկայացնում իբենից տվյալ կուլտուրան և ինչ խնամք և պահանջում:

Արեածադարիկը բարդածաղիկների ընտանիքին պատկանող միամյա բույս է, վորի ցողունները համնում են 2—4 մետր բարձրության: Արեածադարիկը լինում է ուտելու (չբթվող) և յուղատուեսակի:

Արեածադարիկը վորպես սիլոսային բույս ամենածեռնուու կուլտուրաներից մեկն է, վորը տալիս է կանաչ հյութալի մասսայի մեծ բերք, իսկ սիլոսային ուրիշ կուլտուրաների համեմատությամբ՝ մի հեկտարից տալիս ե ավելի շատ աննդատու նյութեր:

Արեածադարիկը հեշտ կերպով և տանում գարնանային ցըտահարությունները, կարող ե հաշտպել չոր հողերի

հետ, վորն ապահովում ե նրա բերքի  
կայունությունը:

Արևածաղիկն իր կյանքի ժամա-  
նակամիջոցում հողից վերցնում ե  
մեծ քանակությամբ սննդանյութեր:  
Լենինգրադի գյուղատնտեսական մար-  
զային փորձնական կայանի տվյալնե-  
րով, սննդանյութերի այն քանակը,  
փորն արևածաղիկը վերցնում ե մի հեկ-  
տարից 50 տոնն բերք տալու դեպքում,  
կազմում ե հետեւյալ.—ազոտ՝ 175 կգ,  
ֆոսֆոր՝ 50 կգ, կալի՝ 250 կգ և կալ-  
ցի 175 կգ, հետեւաբար, արևածաղիկի  
կանաչ մասսայի լավ բերք ստանալու  
համար, հողը պետք ե լավ հագեցնել  
խնամքով պահած գոմաղբով կամ այլ  
պարարտանյութերով:

Խորհրդային Հայաստանի անասնա-  
պահական լեռնային շրջանների խորհ-  
տնտեսությունների ու կոլտնտեսու-  
թյունների պայմաններում կարելի յե

ստանալ արևածաղիկի կանաչ մասսայի  
բերք 4—5 անգամ ավելի միայն այն  
դեպքում, յեթե կիրառվեն անհրա-  
ժեշտ ագրոտեխնիկական ձեռնարկում-  
ները և լիովին ոգտագործվեն լոռվա  
զոնալ փորձնական կայանի փորձերը:

### 1. ԱՐԵՎԱԾԱՂԻԿԻ ՑԱՆՔԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Արևածաղիկը պետք ե ցանել վոր-  
քան հնարավոր ե շուտ, վորովհետեւ  
նրա սերմը ներփակված ե հաստ կե-  
ղեի-կճեպի մեջ, վորը ծլելու համար  
պահանջում ե հողի մեծ խոնա-  
վություն և յերկար ժամանակ: Արևա-  
ծաղիկից մեծ բերք ստացվում ե նրա  
կաթնային հասունության շրջանում,  
իսկ վորպեսզի արևածաղիկը հասնի հա-  
սունության այդ շրջանին, հարկավոր  
ե 100—120 որ՝ ծլելուց հետո: Վոր-

Աղյուսակ № 2

Յանքի ժամանակը	Բերքահավաքի ժամանակը
2/5—34 թ., 9/8—34 թ., 22/8—34 թ., 12/9—34 թ.	
224,6	245,0

Վերևում բերված աղյուսակներից յերեսում ե, վոր մեկ հեկտարից կանաչ մասսայի ավելի մեծ բերք ստացվում ե վաղ ցանքի դեպքում, այսինքն 12/4—34 թ.:

Սիլոսի համար արեածաղկի բերքափառի ժամկետը՝ լավորակ սիլոս ստանալու գործում, վճռական նշանակություն ունի:

Արեածաղկի բերքահավաքի ժամկետի աղյուսակների սիլոսի վորակի վրա այս բրոցյուրի հավելվածում:

Համենայն դեպք արեածաղկի հասունանալու լավագույն շրջանը, յերբ պետք ե քաղել այն սիլոս պարագանելու համար, դա այն ժամանակն ե, ոերբ սերմը լցվում ե կաթնանման

Աղյուսակ № 1

Յանքի ժամանակը	Բերքահավաքի ժամանակը
12/4—34 թ.	8/8—34 թ., 19/8—34 թ., 6/9—34 թ.
247,3	249,7

հյութով։ Հնարավոր չես սպասել այնպիսի սի ըրջանի, յերբ բույսերը դաշտում հասունության այդ ըրջանի (այսինքն կաթնային) հասնեն միաժամանակ, վորովհետև տարբեր բույսեր հասունության տարբեր ըրջանում կարող են լինել։ Անհրաժեշտ, եւ վոր կողմանակություններն ու խորհունությունները սիլոսի համար արևածաղկի բերքահավաքը կատարեն իր ժամանակին, վորով կատացվի լավորակ կամ առաջին կարգի սիլոս։

## 2. ԻՆՉ ԶԵՎՈՎ ԿԱՏԱՐԵԼ ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՑԱՆՔԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգների գյուղատնտեսական հանրագիտարանի 1923 թվականի տվյալներով՝ արեածաղկի լավագույն արդյունք կտա այն դեպքում, յերբ նրա ցանքը կատարվի 15 սմ

իրարից հեռու ակոսներում և 75 սմ հեռու լինեն իրարից շարքերը։ «Հերովդ» կոմունայի տվյալները նույնպես հաստատում են այս բանը։

Լոռվա զոնալ փորձնական կայանի տվյալները նույնպես խոսում են հոգուտ արևածաղկի լայնաշարք ցանքի՝ 90 սմ միջջարքային հեռավորությամբ։

1934 թ. բերքի հաշվառման աղյուսակ

Ցանքի ձեզ (միջջարքային լայնություն)	Կանաչ մասսայի բերքը 1 հեկտար ընտաներով	Ծանոթագրություն
---	--	-----------------

60 սմ	246,0	
90 »	256,0	
120 »	237,0	

Ինչպես յերեսում եւ այս աղյուսակից՝ ցանքի ամենալավ ձեզ, յեղանակը հանդիսանում է 90 սմ միջջարքային ցանքը, վոր տալիս եւ ամենամեծ բերքը և, տնտեսական շահավետության տեսա-

կետից վերցրած, հեշտացնում եւ արեւագածաղկի մշակման մեքենայացումը:

### 3. ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՊԱՐԱՐՑԱՑՈՒՄԸ

Սիլոս պատրաստելու նպասակով արեւագաղկի կուլառութային հատկացված հողի հիմական պարաբռանյութը գոմաղման եւ, վորը հողին տալիս եւ քույսին անհրաժեշտ գննդանյութերի բոլոր հիմնական տեսակները:

Թե ինչպես եւ ազդում գոմաղման արեւագաղկի բերքի վրա, յերկում և լոռվա փորձնական կայանի փորձերից:

(Յղուսակը տես հետեւյալ էջում)

1933 յեկ 1934 թ. թ. բերքի հաճվառման  
աղյուսակը

Առանց պարապ- տացման . . .	Կանոչ մասսա 1 հեկտ. ցենտ	
	1933 թ.	1934 թ.
20 տոնն գոմաղկ	228,0	201,7
40      »      »	281,7	236,2
60      »      »	301,7	273,1

Ունենալով արեւագաղկի ցածր բերք չպարապտացված հողամասերում, տարբեր քանակի գոմաղկ տալու դեպքում խիստ կերպով բարձրանում եւ բերքատվությունը:

Մի հեկտարին 60 տոնն գոմաղկ տալու դեպքում ստացվում եւ ամենաբարձր բերքը, վորն արտահայտվում եւ 1933 թվին բերքի  $110,2^0/0$  հավելումով՝ համեմատած չպարապտացված գաշտի հետ, և 1934 թ.՝  $105,5^0/0$  հավելումով:


Տնտեսական ցաների համար (մեծ  
տարածությաւններ պարարտացնելիս),  
հատկապես Ստեփանավանի շրջանի կող-  
տնտեսությունների ու խորհտնտեսու-  
թյունների, համար խորհուրդ և արգում  
սիլոսին հատկացվող հողամասի մի հեկ-  
տարին տալ 20 տոնն գոմաղբ, ըստ վո-  
րում գոմաղբի այս քանակը, չպարարտաց  
ըած արտերի համեմատությամբ, տալիս  
ե բերքի հավելում 47,4—50,3 տոկոսով։  
Տվյալ չափով գոմաղբ հողին խառնելու  
դեպքում կոլանտեսություններին ու  
խորհտնտեսություններին հնարավորու-  
թյուն և արգում արևածաղկի ավելի  
շատ հողամասեր պարարտացնել։

Խորհուրդ և տրվում գոմաղբը մացը-  
նել փտած վիճակում, սակայն յեթե  
տնտեսության մեջ հնարավորություն  
չկա փտած գոմաղբ պատրաստել, թույլ  
ե տրվում պարարտացնել նաև թարմ

գոմաղբով։ Յուրաքանչյուր անտեսու-  
թյան կից անհրաժեշտ ե ունենալ հա-  
տուկ գոմաղբանոց՝ գոմաղբը ձմեռվա  
ընթացքում լավ պահպանելու համար  
այն հաշվով, վոր գարնանը դաշտ գուրս  
բերվի։

Հանգային պարարտանյութեր կարող  
են գործադրվել արևածաղկի հողամա-  
սերում այն շրջաններում, ուր հողը  
հարուստ ե որդանական նյութերով։ Որ-  
դանական նյութերով աղքատ հողերում  
միայն հանգային նյութերով պարար-  
տացումը կարող ե լավ ազդեցություն  
չգործել կանաչ մասսայի բերքի վրա։

Ստեփանավանի շրջանի հյուսիսային  
մասում արևածաղկի կուլտուրայի հան-  
գային պարարտացումը կարող ե ապա-  
հովել բարձր բերքը, վորը հաստատում  
են կոռվա գոնալ կայանի փորձերի  
տվյալները։



1934 թ. Բերքի Տվյալների աղյուսակ.

Կտնաշ մասամբ բերքը ցենտերով՝<sup>1</sup> 1 նեկ.

Առանց պարարտացման .	250,7	ցհնտ.
Ֆուֆոր 60 կգ . . . . .	279,3	»
» 90 » . . . . .	291,3	»
» 120 » . . . . .	317,5	»
» 150 » . . . . .	322,7	»

Ֆոսֆորը սուպերֆոսֆատի տեսքով  
մտցված ե 13 տոկոսով:

Ինչպես յերկում ե այս աղյուսակից,  
ֆոսֆորի ամենալավ դոզան 150 կիլո-  
գրամն ե: Տնտեսական շահավետության  
տեսակետից հաճախարարվում ե հողի  
մեջ մացնել 90 կգ ֆոսֆոր, այսինքն  
մի հեկտարին 11,7 ցենտներ սուպեր-  
ֆոսֆատ:

Մոխիրը, վորպես տեղական պարար-  
տանյութ, խորհուրդ ե արվում գործա-  
ծել մի հեկտարին 20 ցենտներ: Արհա-  
ծաղկի հողամասին տվյալ չափով մոխիր  
տալու դեպքում, փորձից ստացված

տվյալների համաձայն, չպարարտացված  
դաշտի համեմատությամբ, ստացվում է  
բերքի 38,5 տոկոս հավելում:

Եթե բերքած տվյալների հիման վրա  
մեր կոլտնտեսություններին և խորհ-  
անականական խորհուրդ ե տըր-  
փում հետկյալը,—

1. արեածաղկի հողամասի հերկը կա-  
տարել աշնանը 18—20 սմ խորսությամբ,  
իսկ գարնանը կրկնավար անել լուշիլ-  
նիկով և լավ փոցինել.

2. արեածաղկի ցանքը սիլոսի համար  
կատարել ըստ հնարավորին շրտում.

3. կատարել լայնաշարք ցանք՝ միջ-  
շարքերի 90 սմ լայնությամբ. ցանքի  
նորման մի հեկտարի համար 18—20 կգ,  
վորի կոնդիցիան պետք ե վոչ պակաս  
95%—ից մաքուր և 80% ծլունակ լինի.

4. արեածաղկի խնամքը հետկյան ե.—  
յերբ բույսը համնում ե 10—20 սմ բար-

ձըրության, կատարվում ե միջարքային  
փիրեցում՝ ձիու կուլտիվասորով։ Ան-  
թույլատրելի յե ուշացնել միջարքային  
առաջին փիրեցումը, վորովհետեւ դրա-  
նից ե կախված բույսի նորմալ զարգա-  
ցումը։ Միաժամանակ միջարքերի մշակ-  
ման հետ միասին կատարվում ե բույսի  
շարքերի նոսրացում։ Վերջինս կատար-  
վում ե այն հաշվով, վորպեսզի մնացած  
առողջ բույսերը մեկը մյուսից 20 սմ  
հեռավորության վրա գտնվեն։ Իր ժա-  
մանակին նոսրացում կատարելլը հնա-  
րավորություն ե տալիս յերիտասարդ  
բույսերին ավելի արագ ամրանալ։ Յերբ  
ծիլերը համառում են 20—25 սմ-ի, կա-  
տարվում ե միջարքերի յերկրորդ փըս-  
րեցումը։

5° բերքահավաքը կատարվում ե այն  
ժամանակ, յերբ դեռևս արևածաղկի ցո-  
ղունը չի կարծրացել ե չեն սկսել տե-

րիները դեղնել ու թափվել համենայն  
դեպէ՝ վոչ ուշ քան լիովին ծաղկման  
ժամանակ։ Սիլոսի արևածաղկի հասու-  
նության լավագույն շրջանն այն ժա-  
մանակն ե, յերբ սերմը լցվում ե կաթ-  
նանման հյութով։

Բերքահավաքը լավ ե կատարել հացա-  
հատիկ հնաձող մեքենայով (մնեյկա), վո-  
րովինետեւ խոտհնձի մեքենայով (կոսիլկա)  
հնաձելու դեպքում բույսերն ընկնում են  
պատահական ուղղությամբ, ընկնում են  
ձիերի վոաների տակ, իսկ յեթե տրակառ-  
քային հավաք ե կատարվում, այս դեպ-  
քում ընկնում են անիմլերի տակ, տափա-  
կանում ու ցեխուտվում են և նրանից ըս-  
տացվում ե վատորակ սիլոս։ Արևածա-  
ղիկը կտրում են վոչ թե ցողունի հիմ-  
քից, այլ հողի յերեսից 8—12 սմ բար-  
ձրությունից։

6. Լոռվա զոնալ փորձնական կայանի  
փորձերի տվյալների հիման վրա, պա-

բարտացման համար խորհուրդ ե արր-  
վում կատարել հետեւյալը. — զոմաղք՝ մի  
հեկտարին տալ 20—40 տոնն, մոխիք՝  
20 ցենտոներ: Հանքային պարարտանյու-  
թերից սուպերֆոսֆատ՝ մի հեկտարին  
6,7—11,7 ցենտոներ:

Ինչպես տեսնում ենք վերև հիշվածից,  
արեածաղիկը սիլոսի համար ցանելս  
առանձնապես բարդ մշակում ու խոնամք  
չի պահանջում: Դրա համար ել Խորհր-  
դային Հայաստանի անամսապահական  
ըջանների կորանտեսություններն ու  
խորհանակառությունները պետք ե կի-  
րաւեն ազգութեանիկական այն ձեռնար-  
կումները, վորոնք հիշատակված են վե-  
րեում, վորպեսզի բարձրացվի սիլոսի  
համար մշակվող արեածաղկի կանաչ  
մասսայի բերքատվությունը 5—6 տոն.  
Նից մինչև 20—25 տոննի:

## Հավելված

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԺԱՄԿԵՏԻ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԻԼՈՍԻ ՎՈՐԱԿԻ ՎՐԱ

Ինչպես հայանի յե, սիլոսացած կերի  
պահպանունակությանը (կոնսերվացու-  
մը) հարակցում են թթուներ, վորոնք  
առաջանում են խմորման պրոցե-  
սում: Այդ թթուներն առաջանում են  
միկրոսրդանիզմների աշխատանքի հե-  
տևանքով:

Սիլոսը լավագույն կերպով պահպա-  
նելուն նպաստում են կաթնաթթուները  
վորոնք կտղմկում են սիլոսացած կերի  
պարունակած շաքարից:

Գիտնականները վաղուց հաստատել  
են, վոր խմորման պրոցեսում, սիլոսաց-  
ման կանոնավոր, ձիշտ պայմաններում,  
առաջ ե գալիս առավել մեծ քանակի  
կաթնաթթու և քիչ քանակի քացախա-  
թթու: Յուղաթթուներ առաջանում են

միմիայն սիլոսացման վատ պայմանների առկայության դեպքում:

Հաստատված են նույնպես, վոր սիլոսի վորակը կախում ունի խմորման ժամանակ կուտակված թթուների քանակից ու վորակից: Գերմանացիները (Կեներ, Ֆելտց, Կիրշ և ուրիշները) տարբեր վորակի սիլոսի շատ անալիզներ են կատարել և թթվի բաղադրության հիման վրա սահմանել են կլասիֆիկացիա (գնահատություն): Ներկայումս բոլոր յերկըրներում ըստ նրանց մեթոդի թթվության անալիզների վորոշում են սիլոսի վորակը:

Այդ վորակի գնահատությունը հետեւյալն ե. —

1. առաջին կարգի սիլոսը — «շատ լավ»-ը: Սա, վորպես կանոն, պարունակում ե գերակշռող քանակի կաթնաթթու (70 տոկ-ից ավելի), և մնացածը

միայն քացախաթթու յեւ: Այս սիլոսն ուրիշ թթու չի պարունակում.

2. յերկրորդ կարգի սիլոս — «լավ»-ը: Այս կարգին ե դասված սիլոսացման կերը, վոր չի պարունակում յուղաթթու, սակայն պարունակում ե բարձր քանակի (30 տոկ-ից ավելի) քացախաթթու և, առաջինի հետ համեմատած, քիչ քանակի կաթնաթթու.

3. յերրորդ կարգի սիլոս — «միջին»: Այս կարգին ե պատկանում սիլոսային կերը, վորը պարունակում ե արդեն՝ բացի կաթնաթթվից ու քացախաթթվից, անշատ քանակի յուղաթթու (մինչև 0,3 տոկոս):

4. չորրորդ կարգի սիլոս — «վատ», վոր պարունակում ե մեծ քանակությամբ յուղաթթու (0,3-ից մինչև 1,3 տոկոս): Այսպիսի սիլոսով չի կարելի կերակրել այն կովերին, վորոնցից ցան-

կանում են ստանալ լավորակ կաթ և  
կաթնամթերքներ: Բայց այդ, ավելորդ  
քանակի յուղաթթուները հենց իրենք  
կարող են հիվանդություն առաջացնել:

5. հինգերորդ կարգի սիլոս—«ան-  
պետք»: Այս կարգին եղասված արգեն,  
կարելի յետ ասել, վոչ թե սիլոս, այլ  
փասծ կերը—բորբոսնած, լարձուն, մա-  
ծոցիկ կերը, վորն ունի փառ (գոմաղ-  
թի) հոտ և շատ ցածր թթվություն:  
Այս սիլոսը վորպես կեր բոլորովին ան-  
պետք ե, նրանով չի կարելի կերակրել  
անասուննելին:

Վերև մատնանշած զնահատման հիման  
վրա, ինչպես տեսնում ենք, ամենալավ  
վորակի սիլոսն ստացվում է այն գեպ-  
քում, յերբ սիլոսի խմորման ժամա-  
նակ կուտակվում ե կաթնաթթուն  
մինչեւ  $\frac{2}{3}$ -ի և քացախաթթուն՝ մինչեւ $\frac{1}{3}$ -ի չափով. կաթնաթթվի այսպիսի

քանակ կարելի յետ ստանալ միայն  
ճիշտ սիլոսացում կատարելու գեպքում:

Նորմալ ձևով սիլոս ստանալու պայ-  
մաններից մեկը, ինչպես մենք հաստա-  
տեցինք Անդրկովկայան անասնաբու-  
ծական ինիստիտուտում և Լոռվա զոն-  
կայանում կատարած փորձով, հանդիսա-  
նում է սիլոսի համար բույսի հավաք-  
ման ժամանակը:

Այս փորձով ուսումնառութեց, թե  
ինչպես ե ազդում արևածագիկի բերքա-  
հավաքի ժամանակը՝ սիլոսի վորակի վրա:  
Սիլոսացման համար արևածագիկը հա-  
վաքվեց անման յերեք շըջանում:—  
1) ծաղկման սկզբին, 2) լիովին ծաղ-  
կելու ժամանակ և 3) կաթնային հա-  
սունության շըջանում: Արևածագիկը  
այդ փորձում սիլոսացման դրվեց մա-  
քուր տեսքով և սիսեսի հետ խառն:  
Սիլոսացման պայմանները միատեսակ

Եյին։ Ցեմենտե հորերը լցվում եյին  
արագ կերպով։ Սիլոսի մասսան կտըրտ-  
վում եր սիլոս կտրող մեքենայի ոգ-  
նությամբ։ Կանաչ մասսան լցնելու ժա-  
մանակ նա խնամքով տրորվում և պըն-  
դացվում եր։ Հորերը լցնելուց հետո  
խնամքով ծածկել հողի շերտով։

Այս փորձի հիման վրա ստացած  
սիլոսի թթվության անալիզները տվին  
հետեւյալ արդյունքները։

(Աղյուսակը տես հետեւյալ հջում)

Սիլոսացման շրջանը (ստաղիան)	Թթվագույն պերութ. տոկոսներ.		ա	Գնահատու-
	կաթ- նա- յին	քա- յակ յին		
Արևածաղիկ՝ «Ճաղկ- ման սկզբին»	72,3	27,7	չկա	1. կարգի— «շատ լավ»-ը
Արևածաղիկ՝ «Լիո- վին ծաղկած»	64,0	36,0	»	2-րդ կարգի— «լավ»-ը
Արևածաղիկ՝ «Մոմա- լին հասունության»	55,7	44,3	»	2-րդ կարգի— «լավ»-ը
Խառնուրդ սկզբուի հետ՝ «Ճաղկման սկզբ- յին»	72,9	27,1	»	1-ին կարգի— «շատ լավ»-ը
Խառնուրդ սկզբուի հետ՝ «Լիովին ծաղ- կած»	65,9	34,1	»	2-րդ կարգի— «լավ»-ը
Խառնուրդ սկզբուի հետ՝ «մոմային հա- սունության»	39,3	27,1	38,6	4-րդ կարգի— «վատ»-ը

Խնչպես տեսնում ենք աղյուսակից,  
1) արևածաղիկը—սիլոսացված, թե մա-  
քուր վիճակում և թե խառնուրդի դեպ-  
քում—«Ճաղկման սկզբի» շրջանում  
(ստաղիայում) տվել ե «առաջին կարգի»

«Հատ լավ» սիլոս, 2) «Առվին ծաղկման» ժամանակ սիլոսացված արեածաղիկը, ինչպես մաքուր վիճակում, այնպես և խառնուրդով, տվել ե արդեն վորոշ չափով ցածր վորակի սիլոս՝ շրջ կարգի «լավ»-ը, 3) «մոմային հասունության» ժամանակ սիլոսացված արեածաղիկը տվել ե մաքուր վիճակում սիլոսացման դեպքում լավ վորակի սիլոս, իսկ սիսեռի խառնուրդի հետ միասին՝ չորրորդ կարգի «վատ» սիլոս՝ յուղաթթվի պարունակությամբ:

Այստեղից գալիս ենք այն յեզրակացության, վոր ամենալավ վորակի սիլոս ստացվում ե արեածաղիկի հասունության վաղ շրջանում — «ծաղկման սկզբին» սիլոսացնելու դեպքում, հետեւաբար, վորպեսզի արեավածաղիկը լավորակ սիլոս ստացվի, պետք ե այն

սիլոսացնել ծաղկման սկզբին, համենայն դեպս վոչ ուշ վիռվին ծաղկման ժամանակից:

Լոռվա զոնալ կայսանի բիմլաբուռնորիա՝  
Ի. Մ. ԶԱԽԱՐՉԵՆԿՈ



Պատ. լոմբագիր՝ Ս Խռահակյան  
Մասն. լոմբագիր՝ Ն. Հովհաննիսյան  
Թարգմ. Աքք. Գրիգորյան  
Սըմագրիչ Խ. Ալվազյան

---

Քլավիլիսի լիազոր Հե 9-93

Հըմատ. № 212, պատվեր № 272, տիպաժ 4000  
Հանձնվել ե աբտազըրության 1935 թ ապրիլի 20-ին  
Ստորագրված ե տպելու 1935 թ մայիսի 16-ին  
Քյուղաբատի տպարան, Յեղեգն, Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0285910

15243